Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N 1085-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ---------- 2020թ. N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 1085-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի «Պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու

մասին պայմանագիր չկնքած զինծառայողների), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողների, ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների և սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1085-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետում «և ուսումնառության տարիների» բառերը փոխարինել «, ուսումնառության տարիների և առաջադիմության» բառերով.

բ. 3-րդ ենթակետում «երկրների» բառից հետո լրացնել «և առաջադիմության» բառերը.

2) որոշման 2-րդ հավելվածում՝

ա. 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովությունը, ըստ շնորհված զինվորական կոչումների, ուսումնառության տարիների և առաջադիմության, սահմանվում է.

(դրամ)

NN ը/կ	Ամսական չափերը				
	Ըստ կուրսանտին շնորհված զինվորական կոչման	Ըստ ուսումնառության տարիների			
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի

1.	ավագ	27 100	28 300	29 500	30 700	31 900
2.	ավագ սերժանտ	23 200	24 400	25 600	26 800	28 000
3.	սերժանտ	19 400	20 600	21 800	23 000	24 200
4.	կրտսեր սերժանտ	15 500	16 700	17 900	19 100	20 300
5.	եֆրեյտոր	11 600	12 800	14 000	15 200	16 400
6.	շարքային	5 300	7 100	9 500	11 300	13 100

4. Օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովությունը, ըստ ուսումնառության երկրների և առաջադիմության, սահմանվում է.

(դրամ)

Ամսական չափերը		
Ըստ ուսումնառության երկրների		Ըստ առաջադիմության
Ռուսաստանի Դաշնություն	Այլ օտարերկրյա պետություններ	(5-րդ կետի պայմանն ապահովելու դեպքում)
10 000	100 000	10 000

».

բ. լրացնել 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Առաջադիմության համար դրամական ապահովությունը հաշվարկվում է կիսամյակային և (կամ) հաջորդ կուրս փոխադրվելու գնահատման արդյունքներով՝ կուրսանտի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ռազմաուսումնական հաստատությունում սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 80 տոկոսը կազմելու դեպքում: Առաջադիմության համար դրամական ապահովությունը հաշվարկվում է գնահատված կիսամյակին և (կամ) հաջորդ կուրս փոխադրվելու քննություններին հաջորդող կիսամյակի ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ից: